

աղէկ են քան վարիններն, եւ եթէ վերիններն վար իջնան կամ վարիններն վեր ելնեն՝ օղափոխութեամբ իրենց բնաւորութիւնն ալ կփոխեն:

ԻՂ.

ԷՅՈՒՊ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ

Ս. Եղիայի Էյուպը պտըտած ենք, քիչ մ'ալ Աստուածածնայ Էյուպը շրջինք:

Այս թաղն ձեռներն աշխարհէս քաշած է. քայլ մը յառաջ երթալու կամք չունի, եւ եթէ չենք սխալիր՝ աշխարհ եկած ըլլալուն վրայ ալ գղջացած է: Եթէ կարելի ըլլար՝ երկնից դէմ բողոք կբառնային ասոնք, թէ ինչո՛ւ գիրենք աշխարհ դրկած է:

Այս թաղեցին վերջին ծայր բարեպաշտ եւ ջերմեռանդ է. քիչ կ'ուտէ, շատ կաղօթէ:

Դաստիարակութիւնը չսիրեր, ուստի կարեւորութիւն չտար վարժարանին. թէպէտեւ երիտասարդներէն ոմանք կջանան թաղին մէջ ուսման սէր տարածելու:

Այրերն եւ կիներն յուսահատ վիճակ մ'ունին. ընդհանրապէս իրենց գլուխներն միշտ ի խոնարհ կբռնեն, որպէս թէ մէկէ մը յանդիմանուած ըլլային:

Պէտք է գիտնալ, թէ ասոնք ծոյլ չեն, կաշխատին, բայց մեքենաբար եւ միշտ կը մնան հոն՝ ուր որ են:

Աստուծոյ մօտ եւ սատանայէ հեռի են եւ այնչափ երկիւղած են, որ եթէ Ս. Եղիա անդիի թաղին մէջ երկաթեայ տախտակն քիչ մը ուժով շարժէ՝ ամենքն ծակէ ծակ կփախչին մուկի պէս:

Ասոնց մէջ գիրութիւն չկայ. ընդհանրապէս նիհար են բայց քաջառողջ:

Արբեցութիւն չունին, ջուր կխմեն միայն:

Լաւ երազ կմեկնեն. այս թաղին մէջ մարդ չկայ, որ ամեն գիշեր քանի մը հարիւր երազ չտեսնէ: Օր մը ծերերին մէկը կ'ըսէր.

–Այս գիշեր մինչեւ լոյս աչքերս չգոցեցի. բայց ո՛րչափ ալ երազ տեսայ:

Կերելի թէ ասոնք իրենց արթուն եղած ատենն ալ երազ կտեսնեն: Եւ ես չպիտի զարմանամ այսուհետեւ, թէ ինչո՛ւ երբեմն քանի մը ամիսներ